Կրօնական շինութիւններ արտայայտող տեղանուան կազմիչներից ամենակենսունակը եւ վաղնջականը վան/ք արմատն է, որը սկզբնապէս նշանակել է բնակատեղի, հաւաքատեղի, ապա որոշակիացել՝ իբրեւ ծիսական, հոգեւոր նպատակներ հետապնդող մարդկանց հաւաքատեղի: Այս բառի ծագումը Հր. Աճառեանը համարում է իրանական, թէեւ առաւել համոզիչ է դրա ընդհանուր հնդեւրոպական ծագումը: Այստեղ ունենք աւան-վան հնարաւոր զուգաձեւութիւնը: Առաջինն ամրակայւում է որպէս ընդհանուր նշանակութեան բնակատեղի, իսկ երկրորդը վերածւում է կրօնական շինարարական եզրոյթի: Որպէս տեղանուան կազմիչ արդէն աւելի հազուադէպ ունենք եկեղեցի, մատուռ, անապատ արմատները:

Ի մի բերելով հաւատի հետ կապուած եզրոյթների տեղանուանաստեղծ արժէքը՝ պէտք է նշել, որ ե՛ւ հեթանոսական, ե՛ւ քրիստոնէական բովանդակութիւն ունեցող տեղանուններում առանձնանում են 4 տիպի տեղանուան կազմիչներ. ա) ծէսերի եւ հաւատքի ատրիբուտների անուններ՝ բագին, պտրուշան, մեհեան, խաչ, մասն, մատաղ, զոհ, նշխար, դրախտ, դժոխք, ոգի, հոգի եւ այլն, բ) դիցանուններ՝ լայն ըմբռնմամբ, այսինքն՝ նաեւ քրիստոնէական սրբացուած հերոսների անձնանուններ եւ դրանց հակադիր մութ ուժերի՝ հակահերոսների անուններ, գ) կրօնական զգացումներ արտայայտող որոշիչ-բառեր՝ կամակատար, երաշխաւոր, զօրավիգ, փառաւոր, բարձեալ, սուրբ, դ) կրօնական շինութիւններ ու հաստատութիւններ նշող բառեր՝ մեհեան, եկեղեցի, վանք, անապատ, մատուռ, կուսանոց եւ այլն:

ԱՔԵՄԵՆԵԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՍԱՏՐԱՊՈՒԹԵԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Յովհաննէս Խորիկեան

Աքեմենեան Պարսկաստանի սատրապական բաժանման համակարգում Փոքր Ասիան (յատկապէս՝ վերջինիս արեւմտեան եւ կենտրոնական շրջանները) ունէր առանձնայատուկ նշանակութիւն, քանի որ Աքեմենեանների յարաբերութիւնները Աթէնքի կամ Սպարտայի հետ գրեթէ միշտ լարուած էին, եւ պատերազմական գործողութիւնների թատերաբեմ դառնում էին նաեւ Աքեմենեանների փոքրասիական տիրոյթները, որոնց մէջ կարեւոր նշանակութիւն ունէր III սատրապութիւնը, որի վարչական բաժանման քննութեանն էլ նուիրուած է սոյն յօդուածը:

Յոյն պատմիչ Հերոդոտոսը, անդրադառնալով Աքեմենեան Պարսկաստանի III սատրապութեանը, գրում է. «Դէպի ներս նաւարկելիս աջակողմեան հելլեսպոնտոսցիներից, փռիւգիացիներից, Ասիայի թրակացիներից, պափլագոնացիներից, մարիանդիններից եւ սիրիացիներից (ստացուող) հարկը երեք հարիւր վաթսուն տաղանդ (էր). այս նահանգը երրորդն էր»[1]: Պատմիչի տեղեկութիւնից պարզւում է, որ III սատրապութիւնը տարածուել է Փոքր Ասիայի հիւսիսային եւ կենտրոնական հատուածների մեծ մասի վրայ, ընդ որում՝ Փռիւգիան եւ սիրիացիների երկիրը՝ Կապադովկիան[2], ընդգրկել են հսկայական շրջաններ: Ստորեւ կը քննենք Հերոդոտոսի եւ միւս հեղինակների տեղեկութիւնները Աքեմենեան դարաշրջանի Փռիւգիայի եւ III սատրապութեան կազմում յիշատակուած մնացած երկրների վարչական ու պատմաաշխարհագրական իրողութիւնների վերաբերեալ:

Ասկանիայից (հաւանաբար՝ ներկայիս Իզնիկ լճի շրջանը) եկած փռիւգիացիները մասնակցել են Տրոյական պատերազմին[3]: Հերոդոտոսի յաջորդ տեղեկութիւնը վերաբերում է Քսերքսէսի՝ Հելլադա արշաւող բանակի էթնիկական կազմի նկարագրութեանը: Պատմիչը փռիւգիացիների մասին հաղորդում է հետեւեալը. «Փռիւգիացիներն ունէին պափլագոնականին շատ նման հանդերձանք, քիչ տարբեր դրանից: Մակեդոնացիներն ասում են, թէ փռիւգները, քանի դեռ բնակւում էին Եւրոպայում՝ մակեդոնացիների հարեւանութեամբ, կոչւում էին բրիգներ. բայց Ասիա տեղափոխուելուց յետոյ իրենց երկրի հետ փոխեցին նաեւ իրենց անունը՝ (կոչուելով) փռիւգներ: Արմէնները եւս, լինելով փռիւգիական վերաբնակիչներ, զինուած էին փռիւգների նման: Այս երկուսին առաջնորդում էր Արտոքմէսը, որն ամուսնացել էր Դարեհի դստեր հետ»[4]: Արմէնների յիշատակութեանն արդէն անդրադարձել ենք[5], եւ, դատելով Պլատէայի ճակատամարտին փռիւգիացիների առանձին յիշա-

1 Հերոդոտոս, *Պատմութիւն ինը գրքից*, թարգմանութիւնը Ս. Կրկեաշարեանի (այսուհետեւ՝ Հերոդոտոս), Երեւան, 1986, III, 90:

2 Տե՛ս *Յ. Խորիկեան, Կապադովկիայի տարածքը եւ սահմանները Աքեմենեան Պարսկաստանի կազմում*,- Լրաբեր հասարակական գիտութիւնների, 2010, թիւ 1-2, էջ 107-118:

3 Հոմերոս, *Իլիական*, հին յունարէնից թարգմ. Հ. Համբարձումեան (այսուհետեւ՝ Իլիական), Երեւան, 1955, II, 360:

4 Հերոդոտոս, VII, 73:

5 Տե՛ս *Յ. Խորիկեան, Սատրապական Հայաստանի արեւմտեան եւ հարաւային սահմանները մ. թ. ա. VI-IV դարերում*,- ՊԲՀ, 2005, թիւ 3, էջ 181:

տակութիւնից[6], առաւել հաւանական է ենթադրել, որ փռիւգիացիներն արշաւանքին մասնակցել են առանձին հրամանատարութեան տակ՝ միաւորուած չլինելով այլ ժողովրդի կամ ժողովուրդների հետ: Հերոդոտոսը փռիւգիացիներին յիշատակում է Կրեսոսին հպատակ ժողովուրդների թւում, որոնք բնակուել են Հալիւս գետից արեւմուտք[7]: Պատմիչի յաջորդ տեղեկութիւններից եւս պարզւում է, որ լիւդիացիներից արեւմուտք գտնուող փռիւգիացիներն արեւելքում հասել են մինչեւ սահմանային Հալիւս գետը[8]:

Փռիւգիայի տարածքով էր անցնում նաեւ պարսից «Արքայական ճանապարհի» մի հատուածը. «Լիւդիայի եւ Փռիւգիայի միջով անցնող հատուածում կայ քսան կայան, իսկ (ճանապարհի այդ հատուածի) երկարութիւնը իննսուն չորս եւ կէս փարսախ է: Փռիւգիայից յետոյ (ճանապարհը) տանում է դէպի Հալիւս գետը, որտեղ (լեռնային) դարպասներն են, որոնցով անցնելուց յետոյ կտրում-անցնում ես գետը: Անցարանում կայ ուժեղ ամրացուած պահակակէտ: Այնուհետեւ, Կապադովկիա մտնելով, ճանապարհը ձգւում է մինչեւ Կիլիկիայի սահմանը քսանութ կայան՝ հարիւր չորս փարսախ»[9]: Այս տեղեկութիւնից պարզւում է, որ Հերոդոտոսի ժամանակ Փռիւգիայի որոշակի մի հատուածից, որը կարող է լինել ներկայիս Անկարայի շրջանը, «Արքայական ճանապարհի» երթուղու մի հատուածը մինչեւ Հալիւս գետը չի մտել Փռիւգիայի մէջ, ուրեմն՝ Հալիւսից արեւմուտք Անկիւրայի ուղղութեամբ ընկած հատուածը գտնուել է Կապադովկիայի կազմում[10]: Մինչեւ Դարեհ Ա-ի ձեռնարկած վարչական վերափոխումները Փռիւգիան Լիւդիայի եւ Հոնիայի հետ կազմել է մէկ սատրապութիւն[11]: Այս սատրապութիւնը կառավարում էր Օրոյտէսը, որը սպանում է Դարեհ Ա-ի հրամանով[12]: Փռիւգիայում բնակուել են վերաբնակեցուած պայոնները[13]:

Հերոդոտոսի յաջորդ հաղորդման մէջ կան պատմաաշխարհագրական կարեւոր բնոյթի տեղեկութիւններ, որոնց պարզաբանումը թոյլ է տալիս կատարել տեղագրական ճշգրտումներ եւ նոյնացումներ: Հերոդոտոսը գրում է, որ Կրիտալլայից շարժուող «պարսիկները (նկատի ունի Քսերքսէսի պարսկական բանակը – Յ. Խ.), անցնելով Հալիւս գետը, մտան Փռիւգիա եւ, այդ երկրի միջով ընթանալով, հասան Կելայնէ, որտեղ գտնւում են Մէանդրոս գետի եւ Մէանդրոսից ոչ պակաս խոշոր Կատարրակտէս կոչուած գետի ակունքները: Կատարրակտէսը բխում է Կելայնէի վաճառատեղից եւ թափւում Մէանդրոս գետը»[14]: Հերոդոտոսի տեղեկութիւնից ակնյայտ է, որ Հալիւս գետը բաժանում էր Կապադովկիան Փռիւգիայից: Մեր կարծիքով՝ Քսերքսէսը Հալիւս գետն անցնում է ներկայիս Քըրըքկալէի հատուածում, որն «Արքայական ճանապարհի» կարեւոր անցումներից էր[15], իսկ Կապադովկիայի Կրիտալլան էլ տեղադրւում է ներկայիս Եօզղադի շրջանում[16]: Հերոդոտոսի Կելայնէ

6 *Հերոդոտոս*, IX, 32:

7 Նոյն տեղում, I, 28:

8 Նոյն տեղում, I, 72; V, 49; VII, 26:

9 Նոյն տեղում, V, 52:

10 Այս մասին տե՛ս *Յ. Խորիկեան, Կապադովկիայի տարածքը եւ սահմանները Աքեմենեան Պարսկաստանի կազմում*, էջ 114-115:

11 *Հերոդոտոս*, III, 127:

12 Նոյն տեղում, III, 128: Դիոդորոսը եւ Աթենիոսը նոյնպէս խօսում են Դարեհ Ա-ի կողմից Հոնիայի, Դասկիլէայի եւ Սարդէսի հետ վերադարձնելու մասին (տե՛ս **A. T. Olmstead**, *History of the Persian Empire*, Third Impression, Chicago, 1960, p. 110-111):

13 Նոյն տեղում, V, 98:

14 Նոյն տեղում, VII, 26:

15 *Յ. Խորիկեան, Կապադովկիայի տարածքը եւ սահմանները Աքեմենեան Պարսկաստանի կազմում*, էջ 113:

16 Կրիտալլայի նոյնացումը Տիանային ընդունելի չէ (տե՛ս *Dictionary of Greek and Roman Geography*, ed. by W. Smith, v. I, Boston, 1854, p. 579-580; **W. M. Ramsay**, The historical geography of Asia Minor, London, 1890, p. 41):

քաղաքի տեղադրութիւնը որոշակի դժուարութիւն է ներկայացնում այն առումով, որ յոյն պատմիչը չի նշում Քսերքսէսի անցած ճանապարհն ըստ փարսախների, հետեւաբար՝ տեղագրական նոյնացումները պէտք է առաւել յստակեցուեն այլ աղբիւրների համեմատութեամբ: Մէանդրոս գետը բազմիցս յիշատակւում է հին հեղինակների կողմից, իսկ Կատարրակտէս անունը նշանակում է ջրվէժ: Կելայնէի տեղադրութեան համար պէտք է նկատի ունենալ, որ Հերոդոտոսը Մէանդրոսի եւ Կատարրակտէսի ակունքները դնում է նոյն քաղաքի շրջանում, ընդ որում՝ յաջորդ տեղեկութեան մէջ արդէն Կատարրակտէսի ակունքներն է դնում Կելայնէ քաղաքում, իսկ գետն էլ թափւում է Մէանդրոս գետը: Մէանդրոս գետը նոյնանում է ներկայիս Մեծ Մենդերէս գետին[17], հետեւաբար՝ Կելայնէ քաղաքն էլ տեղադրւում է ներկայիս Դինար քաղաքի շրջանում՝ Կատարրակտէսի ակունքներում: Այսպիսի տեղադրութեամբ Կելայնէն համապատասխանում է հին Ապամէայինի[18]: Այնուհետեւ Քսերքսէսը, «անցնելով Անաւա կոչուած փռիւգիական քաղաքը եւ լիճը, որտեղից աղ էին ստանում, հասնում է Փռիւգիայի Կոլոսսա կոչուած խոշոր քաղաքը: Այստեղ Լիւկոս գետը թափւում է երկրի բացուածքի մէջ եւ անհետանում. բայց մօտաւորապէս հինգ ասպարէզ անցնելուց յետոյ, նորից յայտնուելով, թափւում է Մէանդրոսի մէջ: Կոլոսսայից զօրքը շարժուեց դէպի Փռիւգիայի եւ Լիւդիայի սահմանը եւ հասաւ Կիւբրարա քաղաքը, որտեղ կայ հողի մէջ խրուած կոթող. այն կանգնեցրել է Կրեսոսը. դրա վրայ կայ արձանագրութիւն, որը նշագծում է այդ սահմանը:

Փռիւգիայից նա մտաւ Լիւդիա, որտեղ ճանապարհը բաժանւում է: Դէպի ձախ այն տանում է Կարիա, իսկ դէպի աջ՝ Սարդէս: Այս ճանապարհով գնալիս պէտք է անցնել Մէանդրոս գետը եւ գնալ Կալլատեբոս քաղաքի մօտով, որտեղ արհեստագործ մարդիկ մոշենուց եւ ալիւրից մեղր են պատրաստում: Այս ճանապարհով գնալիս Քսերքսէսը պատահեց սօսու, որին, նրա գեղեցկութեան պատճառով, նա ընծայեց ոսկէ զարդ եւ նրա պահպանումը յանձնարարեց անմահներից մէկին: Յաջորդ օրը նա հասաւ Լիւդիայի մայրաքաղաք»[19]:

Կելայնէից արեւմուտք ընկած Անաւա քաղաքը՝ համանուն լճով, նոյնանում է ներկայիս Զարդակին եւ Աղիգեօլ լճին: Կոլոսսա քաղաքն էլ գտնուել է Զարդակից արեւմուտք եւ համապատասխանում է Լիւկոսի Լաոդիկէային[20] (ներկայիս Դենիզլիի կամ Հոնազի մօտ), որից հիւսիս Կիւբրարա քաղաքն էր (հաւանաբար՝ Հիերապոլիսը): Ինչպէս տեսնում ենք, Քսերքսէսը շարժուել է Մէանդրոսի ձախափնեակով եւ Հիերապոլսից հիւսիս անցել է գետը, որը բաժանում էր Փռիւգիան Լիւդիայից: Կալլատեբոս քաղաքը գտնւում էր Մէանդրոս գետից հիւսիս՝ Կոգամոս գետի ձախափնեակում, եւ տեղադրւում է, հաւանաբար, յետագայի Փիլադելփիա քաղաքի շրջանում՝ Սարդէս տանող ճանապարհին:

Հերոդոտոսի տեղեկութիւնների պարզաբանման համար կարեւոր նշանակութիւն ունեն նաեւ Քսենոփոնի տեղեկութիւնները Կիւրոս Կրտսերի բանակի անցած

17 Հմմտ. *Dictionary of Greek and Roman Geography*, ed. by W. Smith, v. II, Boston, 1857, p. 243:

18 **W. M. Ramsay**, *The historical geography of Asia Minor*, p. 41. տե՛ս **Pliny**, *Natural History*, vol. II, with an English translation by **H. Rackham**, Cambridge-Massachusetts-London, 1947, Loeb Classical Library, V, 106, p. 300:

19 *Հերոդոտոս*, VII, 30-31:

20 Կոլոսսայը նոյնացուել է բիզանդական ժամանակաշրջանի Խոնային (տե՛ս **W. M. Ramsay**, *The Cities and Bishoprics of Phrygia*, vol. I, Oxford, 1895, p. 208, 213): Լիւկոսի Լաոդիկէան յիշատակում է Պլինիոս Աւագը (տե՛ս **Pliny**, *Natural History*, V, 105, p. 298):

երթուղու վերաբերեալ: Ըստ «Անաբասիսի»՝ Կիւրոսը «ճանապարհ ընկաւ Սարդէսից եւ անցաւ Լիւդիայի վրայով 3 կայան՝ 22 փարսախ, մինչեւ Մէանդրոս գետը: Սրա լայնքը երկու պլեթրոն է, եւ այնտեղ կամուրջ կար՝ եօթ նաւի վրայ կապած: Անցնելով գետը, նա արշաւեց Փռիւգիայի միջով մի կայան՝ ութ փարսախ ճանապարհ, մինչեւ Կոլոսսոս, որը բազմամարդ, հարուստ ու խոշոր քաղաք էր... Այստեղից առաջ ընթացաւ երեք կայան՝ 20 փարսախ, մինչեւ Կելենէ՝ Փռիւգիայի բազմամարդ, խոշոր եւ հարուստ քաղաքը: Այստեղ Կիւրոսն ապարանք ունէր եւ ընդարձակ պարտէզ... Պարտէզի միջով հոսում է Մէանդրոս գետը, իսկ նրա ակունքները ապարանքի ներսում էին: Գետը հոսում է նաեւ Կելենէ քաղաքի միջով: Կելենէում գտնւում է նաեւ մեծ արքայի ամրացուած ապարանքը՝ միջնաբերդից ներքեւ՝ Մարսիաս գետի ակունքների մօտ: Սա եւս անցնում է քաղաքի միջով ու թափւում Մէանդրոս գետը: Մարսիասի լայնքը 25 ոտք է...

Այստեղից առաջ է ընթանում երկու կայան՝ 10 փարսախ, մինչեւ Պելտէ բազմամարդ քաղաքը: Այստեղից առաջ ընթացաւ երկու կայան՝ 12 փարսախ, մինչեւ Կերամոն-Ագորա (բառացի՝ խեցեղէնի շուկայ – Յ. Խ.) կոչուած մարդաշատ քաղաքը, որը գտնւում է Միւսիայի ծայր սահմանում: Այստեղից առաջ է ընթանում երեք կայան՝ 30 փարսախ, մինչեւ Կաւստրուպեդիոն մարդաշատ քաղաքը...

Այստեղից առաջ է ընթանում երկու կայան՝ 10 փարսախ, մինչեւ Թիմբրիոն մարդաշատ քաղաքը: Այստեղից առաջ է ընթանում երկու կայան՝ 10 փարսախ, մինչեւ Տիւրիայոն մարդաշատ քաղաքը:

Այստեղից առաջ ընթացաւ երեք կայան՝ 20 փարսախ, մինչեւ Իկոնիոն՝ Փռիւգիայի վերջին սահմանային քաղաքը: Այստեղ երեք օր մնաց: Այստեղից առաջ ընթացաւ Լիկաոնիայի միջով հինգ կայան՝ 30 փարսախ»[21]:

Քսենոփոնի վկայութիւնների համեմատութիւնը Հերոդոտոսի տեղեկութիւնների հետ թոյլ է տալիս ոչ միայն տեսնել որոշ տեղանունների եւ գետերի անունների նոյնացումը, այլեւ աւելի մանրամասնօրէն ստուգել եւ ներկայացնել Փռիւգիայով անցնող ճանապարհահատուածը՝ կատարելով տեղագրական պարզաբանումներ: Քսենոփոնի ժամանակ նոյնպէս Մէանդրոս գետը Լիւդիան բաժանում էր Փռիւգիայից, որտեղ առաջինը յիշատակուած Կոլոսսոս քաղաքը նոյնանում է Հերոդոտոսի Կոլոսսային, որտեղից անցնելով մօտ 120 կմ՝ հասնում է Կելենէ՝ Հերոդոտոսի Կելայնէ քաղաքին: Մարսիաս գետն էլ նոյնանում է Հերոդոտոսի Կատարրակտէսին: Կելենէից Կիւրոս Կրտսերի բանակը շարժւում է Պելտէ քաղաքը, որը գտնւում էր 50-60 կմ հեռու: Պելտէից 60-70 կմ հեռու գտնւում էր Կերամոնեւագորա քաղաքը, որը, ըստ Քսենոփոնի, գտնուել է Միւսիայի ծայր սահմանում կամ աւելի ճիշտ Միւսիայի ուղղութեամբ[22]: Կերամոնեւագորայից անցնելով 160-180 կմ Կիւրոս Կրտսերի բանակը հասնում է Կաւստրուպեդիոն քաղաքը: Պելտէից մինչեւ Կաւստրուպեդիոն Կիւրոս Կրտսերի անցած երթուղին որոշ հակասութիւնների տեղիք է տալիս, եւ պատահական չէ, որ ուսումնասիրողները երթուղին Կելենէից տարել են հիւսիս՝ դէպի Պելտէ, այնուհետեւ Մէանդրոսից հիւսիս տեղադրել են Կերամոն-Ագորան, որը գտնուել է Միւսիային մօտ կամ վերջինիս ուղղութեամբ: Կերամոն-Ագորայից պարսկական բանակի երթուղին կրկին թեքուել է դէպի արեւելք եւ հասել մինչեւ Կաւստրուպեդիոն քաղաքը[23]: Անկասկած, նման երթուղին տարակարծութիւնների տեղիք է տալիս, քանի որ հարց է ծագում, թէ ինչու Կիւրոս Կրտսերի բանակը պէտք է իր ճանապարհը շեղէր հիւսիս, ապա կրկին շարժուէր դէպի արեւելք, այն դէպքում, երբ Աքեմենեան արքայորդու նպատակն ի սկզբանէ դէպի արեւելք շարժուելն էր: Հարկաւ, եթէ Կիւրոսը մօտենում էր Միւսիայի սահմանին, ապա դրա համար լուրջ պատճառներ պէտք է ունենար, ինչը Քսենոփոնի պատմածից չի երեւում: Յաջորդ կարեւոր հարցն այն է, որ Քսենոփոնը չի նշում Մէանդրոսը կրկին գետանցելու մասին, հետեւաբար Կերամոն-Ագորայի տեղադրութիւնը գետից հիւսիս արդէն կասկածելի է: Կերամոն-Ագորան մասնագիտական գրականութեան մէջ տեղադրուել է Ուշակից հիւսիս-արեւելք[24]: Մեր կարծիքով՝ Միւսիայի յիշատակութիւնը Քսենոփոնի յիշեալ տեղեկութեան մէջ ուշ շրջանի ընդմիջարկութիւն է եւ, հաւանաբար, շփոթուել է մէկ այլ քաղաքի հետ, որտեղ խեցեղէնի առեւտուրը եւ արտադրութիւնը նոյնպէս զարգացած է եղել՝ պատճառ դառնալով օտարների համար քաղաքանուան փոփոխութեանը: Պելտէի նոյնացումը ներկայիս Սանդըկլըին, որը Պեւտինգերեան քարտէզի Պելլան է[25], հաւանական է: Այսպիսի նոյնացման պարագայում Կերամոն-Ագորան համապատասխանում է Սանդըկլըից հիւսիս ընկած Աֆիոնին, որը կարեւոր ճանապարհային հանգոյց է եւ վարչական կենտրոն: Կերամոն-Ագորայից յետոյ ճանապարհը հասել է մինչեւ Կաւստրուպեդիոն, ընդ որում՝ ճանապարհի երկարութիւնն, ըստ Քսենոփոնի, կազմել է 30 փարսախ կամ մօտ 180 կմ, ինչը մեր տեղագրական նոյնացումների դէպքում շատ է:

Կաւստրուպեդիոնը տեղադրւում է Աֆիոնից հարաւ-արեւելք եւ համապատասխանում է ներկայիս Ակշեհիրի շրջանին, որից յետոյ գտնուող Իլղինը նոյնանում է Թիմբրիոնին, իսկ Սաիթելին՝ Տիւրիայոնին[26]: Փռիւգիայում Կիւրոս Կրտսերի վերջին հանգրուանը Իկոնիոն՝ ներկայիս Կոնիա սահմանային քաղաքն էր, որից յետոյ պարսից արքայազնը մտնում է Լիկաոնիա:

Համաձայն Քսենոփոնի՝ Կիւրոս Կրտսերը Լիւդիայի, Մեծ Փռիւգիայի եւ Կապադովկիայի սատրապն էր եւ Կաստոլոսի դաշտում հաւաքուող պարսկական զօրքերի ստրատեգոսը[27]: Քսենոփոնի տեղեկութիւնից պարզւում է, որ Կիւրոս Կրտսերին էր յանձնուած Աքեմենեան Պարսկաստանի II եւ III սատրապութիւնների կառավարումը, ընդ որում՝ հետաքրքիր է, որ յոյն հեղինակը որպէս առանձին վարչական միաւոր խօսում է Մեծ Փռիւգիայի մասին: Քսենոփոնը տարբեր առիթներով եւս որպէս առանձին սատրապութիւն յիշատակում է Փռիւգիան, որը գտնուել է բիւթանացիներից՝ Ասիայի թրակացիներից հարաւ[28]: «Կիւրոպեդիայում» եւս Քսենոփոնը բազմիցս խօսում է զոյգ Փռիւգիաների մասին (Մեծ եւ Հելլեսպոնտոսեան)[29], ինչը վկայում է այն մասին, որ երկու Փռիւգիաները Կիւրոս Մեծի ժամանակ

21 *Քսենոփոն, Անաբասիս*, թարգմ. Ս. Կրկեաշարեանի, Եր., 1970, էջ 10-12:

22 **Xenophon**, *Anabasis* (with an English translation by Carleton L. Brownson), Books I-VII, Cambridge-Massachusetts-London, 1980, Loeb Classical Library, p. 14.

23 Տե՛ս, օրինակ, **Xenophon**, *Anabasis*, գրքին կից քարտէզը:

24 *Dictionary of Greek and Roman Geography*, v. I, p. 590:

25 *Dictionary of Greek and Roman Geography*, v. II, p. 572:

26 Մասնագիտական գրականութեան մէջ Թիմբրիոնը նոյնացուել է Հադրիանոպոլիսին, իսկ Տիւրիայոնը գտնուել է Կեօլի եւ Թոլուի մօտ (տե՛ս **W. M. Ramsay**, *The historical geography of Asia Minor*, p. 40):

27 *Քսենոփոն, Անաբասիս*, էջ 7, 31: Պելտան, Թիմբրիոնը, Տիւրիայոնը Լիւկաոնիայի կազմում յիշատակում է Պլինիոս Աւագը (տե՛ս **Pliny**, *Natural History*, V, 95, p. 292):

28 *Քսենոփոն*, էջ 127, 150, 197:

29 *Քսենոփոն, Կիւրոպեդիա*, թարգմ. Ս. Կրկեաշարեանի (այսուհետեւ՝ Կիւրոպեդիա), Երեւան, 2000, էջ 5, 35, 60, 146, 241, 285-287, 355:

եղել են առանձին վարչական միաւորներ[30], որոնք Դարեհ Ա-ի օրօք միաւորուած են եղել նոյն սատրապութեան մէջ:

Դիոդորոս Սիկիլիացին գրում է, որ Կիւրոս Կրտսերը Լիւդիայի եւ Փռիւգիայի կառավարիչներ է նշանակում իր ազգականներին[31]: Հեղինակը նաեւ յիշատակում է Փռիւգիայի Կոլոսսոս քաղաքը[32]: Հեղինակը տարբեր առիթներով Աքեմենեաններին տիրապետութիւնից ե՛ւ առաջ, ե՛ւ յետոյ առանձին-առանձին յիշատակում է Մեծ եւ Հելլեսպոնտոսեան Փռիւգիաները[33]: Ալեքսանդրի մահից յետոյ Պերդիկկասը, ըստ Դիոդորոսի մի տեղեկութեան, Անտիգոնոսին է տալիս Պամփիւլիան, Լիւկիան եւ Մեծ Փռիւգիան, իսկ համաձայն միւսի՝ Լիւկիան եւ Մեծ Փռիւգիան[34]:

Փռիւգիայի մասին կարեւոր տեղեկութիւններ են հաղորդում Արիանոսը եւ Ռուփոսը: Արիանոսը գրում է, որ Ալեքսանդրը ներխուժում է Մեծ Փռիւգիայի Միլիաս մարզը, որը պարսից թագաւորի հրամանով միացուել էր Լիկիային[35]: Փռիւգիան, ըստ պատմիչի, եղել է առանձին սատրապութիւն[36]: Հելլեսպոնտոսի մօտի Փռիւգիան, որը հեղինակը անուանում է նաեւ Փռիւգիա, նոյնպէս եղել է առանձին սատրապութիւն՝ Արսիտոսի ղեկավարութեամբ[37]: Արիանոսը երկու Փռիւգիաները յիշատակում է որպէս Ալեքսանդրի նուաճած երկրներ[38]: Արիանոսի յիշատակած Ասկանիա աղի լիճը համապատասխանում է Հերոդոտոսի Անաւային, իսկ Փռիւգիայի սատրապի նստավայր Կելենէն՝ Կելայնէին[39]: Վերջինս Մեծ Փռիւգիայի կենտրոնն էր[40]: Պատմիչը Գորդիոնը տեղադրում է Փռիւգիայում՝ Սանգարիոս գետի հովտում, որի ակունքները գտնուել են Փռիւգիայում[41]: Պոմպէոս Տրոգոսը Գորդիոնը տեղադրում է Մեծ ու Փոքր Փռիւգիաների միջեւ[42], վերջինիս, այսինքն՝ Հելլեսպոնտոսեան Փռիւգիայի հարաւային սահմանը հասցնելով մինչեւ Գորդիոն: Արիանոսը Անկիւրան համարում է Գալատիայի քաղաքներից մէկը[43], ինչն ուշ շրջանի պատմաաշխարհագրական իրողութիւնների հետ է կապուած, եւ հէնց պատմիչի խօսքից էլ ակնյայտ է, որ նշուած տարածքը մտել է Փռիւգիայի կազմի մէջ՝ Փռիւգիայի սատրապի ղեկավարութեամբ:

Հետաքրքիր են նաեւ Ռուփոսի տեղեկութիւնները: Ռուփոսը յիշատակում է Կելենէ քաղաքը եւ Մարսիուս գետը[44]: Պատմիչը գրում է, որ Փռիւգիայում աւելի շատ գիւղեր կային, քան քաղաքներ, որոնցից ամենանշանաւորը Սանգարիոսի հովտում

30 Հերոդոտոսը յայտնում է, որ Կիւրոս Մեծի ժամանակ Օրոյտէսը Սարդէսի հիւպարքոսն էր, իսկ Միտրոբատէսը Դասկիլէա նահանգի կառավարիչը (*Հերոդոտոս*, III, 120):

31 *Դիոդորոս Սիկիլիացի, Պատմական գրադարան*, թարգմ. բնագրից, առաջաբան եւ *ծանոթագրութիւններ Ս. Կրկեաշարեանի*, Երեւան 1985, էջ 57 (այսուհետեւ՝ Դիոդորոս Սիկիլիացի):

32 Նոյն տեղում, էջ 70:

33 Նոյն տեղում, էջ 17, 75, 80, 82, 110-113:

34 Նոյն տեղում, էջ 110, 113:

35 *Արիանոս, Ալեքսանդրի արշաւանքը,- «Ալեքսանդր Մակեդոնացի»* (այսուհետեւ՝ Արիանոս), Երեւան, 1987, էջ 45: Միլիաս մարզի հետ հաւանաբար կապուած է Հեկատէոս Միլեթացու՝ Փռիւգիայում յիշատակած միլիսիաններ ժողովուրդը (տե՛ս **C. Müller**, *Fragmenta historicorum graecorum*, v. I, Parisiis,1841, fr. 206, p. 14):

36 *Արիանոս*, էջ 46:

37 Նոյն տեղում, էջ 28, 33, 117:

38 Նոյն տեղում, էջ 200, 251:

39 Նոյն տեղում, էջ 51:

40 *Plutarch's Lives*, with an English translation by B. **Perrin**, vol. VIII, Cambridge-Massachusetts-London, 1959, Loeb Classical Library, Eumenes, 8.5, p. 103; **Briant P.**, *From Cyrus to Alexander*. A History of the Persian Empire, translated by **P. T. Daniels**, Winona Lake, Indiana, Eisenbrauns, 2002, p. 705.

41 *Արիանոս*, էջ 51:

42 *Pompei Trogi Fragmenta*, collegit O. Seel, Lipsiae, 1961, 11, 7, 3, p. 86.

43 *Արիանոս*, էջ 57:

44 *Ռուփոս, Ալեքսանդր Մակեդոնացու պատմութիւնը,- «Ալեքսանդր Մակեդոնացի»* (այսուհետեւ՝ Ռուփոս), Երեւան, 1987, էջ 279:

գտնուող Գորդիոնն էր[45]: Ռուփոսը եւս յիշատակում է Անկիւրան, այն տարբերութեամբ, որ Ալեքսանդրը մտնում է նախ Պափլագոնիա, յետոյ Կապադովկիա[46]: Հեղինակը Փռիւգիան նշում է Ալեքսանդրի նուաճած երկրների թւում[47]: Ալեքսանդրի մահից յետոյ Լիկիան Պամփիւլիայի եւ Մեծ Փռիւգիայի հետ բաժին է հասնում Անտիգոնոսին, իսկ Հելլեսպոնտոսին սահմանակից Փոքր Փռիւգիան՝ Լէոնատոսին[48]: Փասկից Փոքր Փռիւգիան՝ Մեծ եւ Փոքր Փռիւգիաների՝ վարչական առանձին միաւորներ լինելու հանգամանքը վկայուած է նաեւ Աքեմենեան Պարսկաստանի մայրամուտին, հետեւաբար՝ ստորեւ կը փորձենք յստակեցնել Փոքր Փռիւգիայի ընդգրկած տարածքը:

Աշխարհագրական առումով Փոքր Փռիւգիան համապատասխանում է III սատրապութեան կազմում յիշատակուած աջակողմեան Հելլեսպոնտոսցիներին, որոնց յաջորդում են փռիւգիացիները:

Հերոդոտոսը մի առիթով յիշատակում է Հելլեսպոնտական երկրի տիրաններ Դափնիս Աբիւդոսցուն, Հիպպոկլոս Լամպսակոսցուն, Հերոփանտոս Պարիոնցուն, Մետրոդորոս Պրոկոնեսցուն, Արիստագորաս Կիւզիկոսցուն, Արիստոն Բիւզանդիոնցուն, նաեւ՝ Հելլեսպոնտոսեան քերսոնեցուն, Հելլեսպոնտոսեան Սեստոսցիների զօրապետին[49]: Նշուած քաղաքների տեղադրութիւնը ցոյց է տալիս, որ Հերոդոտոսը Հելլեսպոնտական երկրին աշխարհագրական առումով տալիս է ընդարձակ տարածք՝ Բիւզանդիոնից մինչեւ Դարդանէլ, այն դէպքում, երբ այլ տեղեկութեան մէջ Հելլեսպոնտոսը միայն Դարդանէլի նեղուցն է[50]: Հերոդոտոսը Հելլեսպոնտոսցիներին ընդարձակ իմաստով է յիշատակում նաեւ Քսերքսէսի բանակի կազմում[51]: Եթէ մի կողմ թողնենք Բիւզանդիոնի, մէկ այլ տեղում յիշատակուած Հելլեսպոնտոսեան Սեստոսի[52] տեղադրութիւնները, որոնք վերաբերում են ձախակողմեան Հելլեսպոնտոսին, ապա Հերոդոտոսի յիշատակած Հելլեսպոնտական քաղաքների տեղադրութիւնն արեւելքում կեզրագծուի Կիւզիկոս քաղաքով: Այս առումով հետաքրքիր է Արիանոսի այն տեղեկութիւնը, որ Փոքր Փռիւգիայի սատրապ Արսիտոսն իր սատրապութիւն է փախչում Գրանիկոս գետի մօտ տեղի ունեցած ճակատամարտից անմիջապէս յետոյ, ընդ որում՝ պատմիչի յիշատակած Զելէա քաղաքը[53] գտնւում է Գրանիկոսից արեւելք, Կիւզիկոսից հարաւ: Ստացւում է, որ Դարդանէլից մինչեւ Կիւզիկոս ընկած տարածքը չի մտել Աքեմենեան Պարսկաստանի III սատրապութեան մէջ եւ տուեալ ժամանակաշրջանում ներառուել է Լիւդիական սատրապութեան մէջ: Նշուած տարածքի վերաբերեալ հին աղբիւրների տեղեկութիւնները բացայայտում են կարեւոր վարչաքաղաքական իրողութիւններ:

Այսպէս, ըստ Հերոդոտոսի Անտանդրոսը եւ Լամպոնիոնը գտնուել են Տրոյական երկրում, իսկ Դարդանոսը, Աբիւդոսը, Պերկոտէն, Լամպսակոսը, Պայսոսը, Պարիոնը համարում է Հելլեսպոնտոսի քաղաքներ[54]: Յոյն պատմիչի մէկ այլ տեղեկութիւնից էլ պարզւում է, որ Տրովադա-

45 Նոյն տեղում, էջ 280:

46 Նոյն տեղում, էջ 281:

47 Նոյն տեղում, էջ 411: Փռիւգիացիների մասնակցութիւնը Գաւգամելայի ճակատամարտին բացառւում է (նոյն տեղում, էջ 351):

48 Նոյն տեղում, էջ 596:

49 *Հերոդոտոս*, IV, 137-138:

50 Նոյն տեղում, IV, 85:

51 Նոյն տեղում, VII, 95: Աբիւդոսցիներն առանձին են յիշատակւում, բայց նոյն հելլեսպոնտոսցիներն են:

52 Նոյն տեղում, VII, 33; 78, IX, 114:

53 *Արիանոս*, էջ 28, 33:

54 *Հերոդոտոս*, V, 26, 117: Սկիլաքս Կարիանդացին Դարդանոսը տեղադրում է Տրովադայում, իսկ Աբիւդոսը եւ միւս քաղաքները՝ Փռիւգիայում (տե՛ս **Скилак Кариандский**, *Перипл обитаемого моря*,- "Вестник древней истории", 1988, № 2, с. 261):

յում բնակուել են նաեւ էոլիացիներ[55]: Քսենոփոնն առանձին-առանձին յիշատակում է Էոլիսը, Փռիւգիան, Տրովադան եւ Փառնաբազոսի երկիրը[56]: Տուեալ տեղեկութեան մէջ Փռիւգիան նոյնանում է Մեծ Փռիւգիային, իսկ Փառնաբազոսի Փռիւգիան Հելլեսպոնտոսեան Փռիւգիան է, հետեւաբար՝ տեղեկութիւնից կարելի է եզրակացնել, որ Տրովադան չի ենթարկուել Փառնաբազոսին եւ վարչական առումով գտնուել է Լիւդիական սատրապութեան մէջ: Քսենոփոնի տեղեկութիւններից մէկում էլ Տրովադան տեղադրւում է Լամփսակոսից հարաւ եւ ձգւում մինչեւ Իդէ կամ Իդա լեռն ու Անտանդրոս քաղաքը, որոնցից յետոյ Միւսիան էր[57]: Ստրաբոնը գրում է, որ Տրովադան հնում կոչուել է փռիւգիական, քանի որ Տրոյայի կործանումից յետոյ վերջինիս տիրեցին փռիւգիացիները, եւ նշում է, որ Հոմերոսը Տրովադայի սահմանը հիւսիսում եւ արեւելքում հասցնում էր մինչեւ Էսեպուս՝ ներկայիս Գեօնենչայի գետը[58]: Ընդ որում՝ Էսեպուսից արեւմուտք ընկած որոշ տարածքներ յետագայում պատկանել են կիւզիկոսցիներին[59]: Պլինիոս Աւագն էլ գրում է, որ Տրովադան տարածուել է Հելլեսպոնտոսի ափին[60]:

Քսենոփոնը յայտնում է, որ Փռիւգիայի սատրապ Փառնաբազոսը փորձում է փակել հելլէնների մուտքը դէպի իր սատրապութիւն՝ օգնութեան գալով բիւթանացիներին[61]: Փառնաբազոսը (Ք. ա. 414-388 թթ.[62]) Փոքր կամ Հելլեսպոնտոսեան Փռիւգիայի կառավարիչն էր, որը նոյնանում է բիւթանիացիների սատրապ Փառնաբազոսին[63], այսինքն՝ Դարեհ Ա-ի ժամանակ ձեւաւորուած III սատրապութեան մէջ ներառուած աջակողմեան հելլեսպոնտոսցիները եւ Ասիայի թրակացիները կամ բիւթանիացիները Ք. ա. Ե. դարի վերջին հանդէս են գալիս որպէս առանձին սատրապութիւն, իսկ Քսենոփոնի յիշատակած Արտակամասը[64] Մեծ Փռիւգիայի սատրապն էր:

Հերոդոտոսը գրում է, որ Օրոյտէսի սատրապութեան կազմում էին Փռիւգիան, Լիւդիան եւ Հոնիան[65]: Պատմիչը նաեւ յայտնում է, որ Օրոյտէսը սպանում է Դասկիլէյոնի կամ Դասկիլէայի կառավարիչ Միտրոբատէսին[66]: Դասկիլէա սատրապութիւնը գտնուել է Կիւզիկոս քաղաքից արեւելք[67]:

Դասկիլէյոն քաղաքը հաւանաբար հիմնադրել են լիւդիացիները. մայրաքաղաքի անունը կապուած է Գիւգէսի հօր՝ Դասկիլոսի անուան հետ[68]:

Քսենոփոնը «Ցունական պատմութիւն» գրքում նշում է, որ Ագեսիլայոսը ներխուժում է Փառնաբազոսի Փռիւգիա եւ սկսում այն աւերել[69]: Փառնաբազոսը «Ա-

---

55 *Հերոդոտոս*, V, 122:

56 *Քսենոփոն, Անաբասիս*, էջ 127:

57 Նոյն տեղում, էջ 195:

58 **Страбон**, *География в 17 книгах* (перевод, статья и комментарии Г. А. Стратановского), Ленинград, 1964, с. 450, 529.

59 Նոյն տեղում, էջ 539, 544-545, 548-549, 554:

60 **Pliny**, *Natural History*, V, 121, p. 310.

61 *Քսենոփոն, Անաբասիս*, էջ 150, 155; 161; **Xenophon**, *Scripta Minora*, with an English translation by E. C. Marchant, Cambridge, Massachusetts, London, 1946, Loeb Classical Library, Agesilaus, I, 23, p. 70.

62 Դասկիլէայի սատրապների մասին տե՛ս **Э. В. Рунг**, *О сатрапских династиях в Ахеменидской державе: Фарнакиды в Даскилии*,- "Ученые записки Казанского университета", т. 153, кн. 3, 2011, с. 87-94.

63 *Քսենոփոն, Անաբասիս*, էջ 197:

64 Նոյն տեղում:

65 *Հերոդոտոս*, III, 127:

66 Նոյն տեղում, III, 120; 126:

67 Նոյն տեղում, VI, 33:

68 Նոյն տեղում, I, 8: Տե՛ս նաեւ **И. С. Свенцицкая**, *Ионийские города в составе Лидийского царства*,- Проблемы античной истории и культуры, I, Ереван, 1979, с. 255.

69 **Ксенофонт**, *Греческая история*, пер. С. Лурье, Москва, 2010, с. 334; **Плутарх**, *Агесилай*, X, XI,-

նաբասիսում» յիշատակուած Փոքր Փռիւգիայի եւ Բիւթանիայի սատրապն է, որի երկրից Ագեսիլայոսը մտնում է Պափլագոնիա[70]: Փառնաբազոսի նստավայրն էր Դասկիլիոնը[71]: Կարելի է ենթադրել նաեւ, որ Փառնաբազոսի իշխանութեան մէջ էր նաեւ Մեծ Փռիւգիան, որի Գորդիոն քաղաքը Փառնաբազոսի ձմեռային նստավայրն էր, իսկ Կելէնը Մեծ Փռիւգիայի ամենամեծ քաղաքն էր, որի մօտ գտնւում էին Մէանդրոս գետի ակունքները[72]: Քսենոփոնի տեղեկութիւնից կարելի է ենթադրել, որ Կիւզիկոսը Փառնաբազոսի սատրապութեան մէջ էր մտնում, իսկ հոնիացիներից, էոլիացիներից յետոյ յիշատակուող Հելլեսպոնտոսի բնակիչները մտել են Հելլեսպոնտոսեան Փռիւգիայի մէջ[73]: Փառնաբազոսի իշխանութեան մէջ էին նաեւ Քաղկեդոնը եւ Աբիւդոսը[74]: Փառնաբազոսին ենթակայ սատրապութիւններից էր նաեւ Էոլիսը[75]: Դասկիլէոն սատրապութիւնը Քսերքսէսի ժամանակ յիշատակում է Թուկիդիդէսը[76]: Դասկիլէոնը նուաճում է Պարմենիոնը Գրանիկոսի ճակատամարտից յետոյ[77]: Դասկիլէոնը գտնւում էր Պրոպոնտիսի հարաւային ափին՝ Կիւզիկոսից արեւելք, Ռինդակուս գետի մօտ[78]: Ի. Դեակոնովը Փոքր Փռիւգիան տեղադրում է Սանգարիոս գետի եւ Մարմարա ծովի միջեւ[79]:

Ստրաբոնը Հելլեսպոնտոսեան Փռիւգիայի մէջ ներառում էր նաեւ Տրովադան[80]: Ըստ Ստրաբոնի՝ Փռիւգիան բաժանուած էր երկու մասի՝ Մեծ Փռիւգիա, որին տիրել էր Միդասը, եւ Փոքր Փռիւգիա, որը գտնւում էր Հելլեսպոնտոսի եւ Օլիմպոսի մօտ ու յայտնի էր նաեւ Փռիւգիայ Էպիկտետ անունով, որին նախկինում տիրում էին բիւթանիացիները[81]: Փռիւգիա Էպիկտետը (բառացի՝ վերամիաւորուած) արեւելքում հասնում էր մինչեւ Ասկանիաս լիճը՝ ներկայիս Իզնիկը, իսկ արեւմուտքում ձգւում էր Տրոյայից այն կողմ[82]: Դատելով Ստրաբոնի տեղեկութիւններից՝ Փռիւգիա Էպիկտետի մէջ չէր մտնում Պրոպոնտիսի հարաւային մերձափնեայ շրջանը, այն դէպքում, երբ Աքեմենեան Պարսկաստանի գոյութեան ժամանակաշրջանում Դասկիլէոնը մտնում էր Փոքր Փռիւգիայի մէջ: Անկասկած, այս բոլոր փոփոխութիւնները տեղի են ունեցել աւելի ուշ, եւ Ստրաբոնը հիմնականում արտացոլում է իր դարաշրջանի պատմաաշխարհագրական իրողութիւնները: Այս-

---

"Избранные жизнеописания", т. II, Москва, 1987, с. 246-247.

70 **Ксенофонт**, *Греческая история*, с. 334; **Плутарх**, *Алкивиад*, XXXVII, XXXIX,- "Избранные жизнеописания", т. I, Москва, 1987, с. 386-387.

71 **Ксенофонт**, *Греческая история*, с. 310, 324, 336, 502. Դասկիլէոնը Հելլեսպոնտոսեան Փռիւգիայի սատրապի նստավայրն էր (տե՛ս **P. Briant**, *From Cyrus to Alexander*, p. 697):

72 **Ксенофонт**, *Греческая история*, с. 256, 491, 501:

73 Նոյն տեղում, էջ 248, 255, 337, 346; **Плутарх**, *Алкивиад*, XXVIII, с. 377-378.

74 **Ксенофонт**, *Греческая история*, с. 249, 250, 254-255, 306, 364.

75 Նոյն տեղում, էջ 306, 313, 371: Տե՛ս նաեւ **М. А. Дандамаев**, *Политическая история Ахеменидской державы*, Москва, 1985, с. 195; **Э. В. Рунг**, *Греция и Ахеменидская держава: История дипломатических отношений в VI-IV вв. до н. э.*, Санкт-Петербург, 2008, с. 287, 293.

76 **Thucydides**, *History of the Peloponnesian war*, with an English translation by Ch. F. Smith, v. I, books I-II, Cambridge, Massachusetts, London, 1956, Loeb Classical Library, I, 129, 1, p. 216.

77 *Արիանոս*, էջ 34:

78 **A. T. Olmstead**, *History of the Persian Empire*, p. 347; **Ксенофонт**, *Греческая история*, с. 501.

79 **И. Дьяконов**, *Предыстория армянского народа*, Ереван, 1968, с. 193.

80 **Страбон**, с. 129.

81 Նոյն տեղում, էջ 510, 535:

82 Նոյն տեղում, էջ 529: Եթէ նկատի ունենանք, որ Կերամոն-Ագորան Քսենոփոնը տեղադրում է Միւսիայում, ապա Անկիւրայի շրջանը մտել է Միւսիայի, ոչ թէ Փռիւգիա Էպիկտետի մէջ (նոյն տեղում, էջ 540): Պլինիոս Աւագը Փռիւգիան կելայնէ, կոլոսսայէ եւ այլ քաղաքներով տեղադրում էր Տրովադայի հետեւում (տե՛ս **Pliny**, *Natural History*, V, 145, p. 328):

պէս, կիւզիկոսցիներին պատկանում էին Զելան եւ Դասկիլիտիս լիճը[83], որը, մեր կարծիքով, նոյնանում է ներկայիս Ապոլեօնտ լճին: Դասկիլէոն քաղաքը[84] տեղադրւում է ներկայիս Ենիքէօյի տեղում[85] Սիմաւ գետի գետաբերանում: Փոքր կամ Հելլեսպոնտոսեան Փռիւգիան տարածւում էր ներկայիս Սիմաւ գետի եւ Իզնիկ լճի միջեւ ընկած տարածքում՝ հարաւում ձգուելով մինչեւ ներկայիս Քէօթահիա:

Հետաքրքիր են Փռիւգիայի մասին Սկիլաքս Կարիանդացու տեղեկութիւնները: Պատմիչի տեղեկութիւնների վերլուծութիւնը ցոյց է տալիս, որ Փռիւգիան ընդգրկել է ոչ միայն Ռինդակոս գետի[71] աւազանը՝ ներկայիս Կոջաչայ, Կիրմաստի, Սիմաւ գետերի հոսանքները, այլեւ Սիմաւ գետի գետաբերանից արեւմուտք՝ մինչեւ Դարդանէլի նեղուց եւ արեւելք՝ մինչեւ Ասկանիաս լիճն ընկած ծովափնեայ շրջանները[86]: Սկիլաքսի Փռիւգիան ընդգրկում է Մեծ եւ Փոքր Փռիւգիաները՝ վերջինիս մէջ արեւմտեան ուղղութեամբ ընդգրկելով նաեւ ընդարձակ տարածքներ: Կարծում ենք, որ Սկիլաքսի տեղեկութիւնները վերաբերում են ոչ միայն նրա ապրած ժամանակաշրջանին՝ Ք. ա. Զ. դարին, այլեւ յետագայ շրջանի գրիչներին, որոնք արտացոլել են տարբեր դարաշրջանների պատմաաշխարհագրական իրողութիւնները: Օրինակ, երբ արեւմուտքում Հելլեսպոնտոսեան Փռիւգիայի մէջ Սկիլաքսը յիշատակում է Կիւզիկոս քաղաքը, ապա վերջինս Հելլեսպոնտոսեան Փռիւգիայի մէջ գտնուել է Ք. ա. Ե. դարի վերջին, Ք. ա. Դ. դարի սկզբին, հետեւաբար՝ այս հանգամանքը չէր կարող վերաբերել աւելի վաղ ժամանակներին: Միւս կողմից էլ նկատենք, որ Սկիլաքսն ընդհանրական ձեւով է խօսում Փռիւգիայի մասին՝ առանց վարչական տարբերակման, եւ ըստ էութեան, յետագայ գրիչները, նկատի ունենալով Փոքր կամ Հելլեսպոնտոսեան Փռիւգիայի գոյութիւնը, վերջինիս մէջ են ներառում նաեւ Հելլեսպոնտոսի հարաւի ընդարձակ մերձափնեայ տարածքները, այսինքն՝ նրանց աշխարհագրական պատկերացումները պայմանաւորուած են եղել այն մօտեցմամբ, որ Փոքր Փռիւգիայի Հելլեսպոնտոսեան անուանումը պէտք է ընդգրկէր ծովափնեայ ընդարձակ շրջանները, ինչը չի հաստատւում միւս աղբիւրների քննութեամբ: Միւս կողմից էլ Հերոդոտոսի յիշատակած աջակողմեան Հելլեսպոնտոսցիները՝ որպէս III սատրապութեան վարչական ենթաշրջան, Դարեհ Ա-ից յետոյ միաւորւում են նոյն սատրապութեան մէկ այլ ընդարձակ վարչական ենթաշրջանի՝ Փռիւգիայի հետ, ինչից յետոյ աջակողմեան Հելլեսպոնտոսցիների երկիրը կոչւում է Փոքր Փռիւգիա: Անշուշտ, կարելի է ենթադրել, որ աշխարհագրական առումով աջակողմեան Հելլեսպոնտոսցիները տարածուել են Դարդանէլի նեղուցից մինչեւ Ասկանիաս՝ ներկայիս Իզնիկ լիճը, սակայն սկզբնաղբիւրների քննութիւնը վերեւում այլ պատկեր ներկայացրեց: Ասուածին աւելացնենք, որ աջակողմեան Հելլեսպոնտոսցիների ընդգրկած տարածքի արեւմտեան մասը, ամենայն հաւանականութեամբ, անցնում է II սատրապութեանը, եւ ըստ այդմ էլ Ստրաբոնը փռիւգիական տարածքները հասցնում էր Տրոյայից այնկողմ: Կամ էլ Տրովադայի մի մասը Հելլեսպոնտոսեան Փռիւգիայի մէջ էր[87]:

Ինչ վերաբերում է Աքեմենեան սեպագիր արձանագրութիւններում աջակողմեան Հելլեսպոնտոսցիների կամ լայն առումով Դասկիլէա սատրապութեան յիշատակութեանը, ապա այս հարցի կապակցութեամբ մեր դատողութիւնները հետեւեալն են.

Ռ. Շմիտտը, գտնելով Թեմիստոկլէսի, այսպէս կոչուած, «16-րդ նամակում» մի արտայայտութիւն, որը համապատասխանում է հին պարսկական «նրանք (այն երկրները), որոնք ծովի մօտ են», ինչպէս նաեւ «ծովի մօտ ապրող ժողովուրդների թագաւորի սատրապ» արտայայտութիւններին, ցոյց է տուել, որ «հոնիացիներին, որոնք ծովի մօտ են» պէտք է տեղադրել Պրոպոնտիսում, այսինքն՝ Դասկիլէա սատրապութիւնում[88]:

Հին պարսկական սեպագիր արձանագրութիւններում հանդիպող աշխարհագրական բառակապակցութիւններին անդրադարձել ենք մէկ այլ ուսումնասիրութեան մէջ[89]: Ստորեւ կատարենք մի քանի դիտարկումներ՝ կապուած Ռ. Շմիտտի ենթադրութեան հետ: Հին պարսկական սեպագիր արձանագրութիւններում փոքրասիական եւ էգէյեան ծովի յոյները յիշատակւում են Հոնիա կամ Հոնիացիներ, իսկ էգէյեան ծովի հիւսիսային ափերին բնակուող յոյները՝ վահանակիր կամ սաղաւարտակիր յոյներ (petasos-wearing Ionians) Դասանուանումներով[90]: Մեր կարծիքով՝ Դասկիլէա սատրապութեան տարածքը արտացոլուած չէ հին պարսկական ոչ մի սեպագիր արձանագրութիւնում: Այսպէս, DPe արձանագրութիւնում Հոնիան առանձին յիշատակուած չէ, եւ փոխարէնը կապադովկիայից, Լիւդիայից յետոյ յիշատակւում են «ցամաքային յոյները եւ նրանք, որոնք ծովի մօտ են, եւ երկրները, որոնք ծովի միւս կողմում են» (Katpatuka : Sparda : Yaunā : tyaiy : uškahyā : utā : tyaiy : drayahyā : utā : dahyāva : tyā : para : draya :)[91]: Ցամաքային յոյները համապատասխանում են փոքրասիական կամ I սատրապութեան յոյներին, «նրանք, որոնք ծովի մօտ են»՝ վահանակիր յոյներին, իսկ «անդրծովեան երկրները», որոնք յիշատակւում են նաեւ DSaa-ում[92], տեղադրւում են Մակեդոնիայիում, Թրակիայում եւ Դանուբի գետաբերանի շրջանում:

Մնացած արձանագրութիւններում տեղ գտած աշխարհագրական հասկացութիւնները սոսկ հիմնաւորում են մեր դատողութիւնները եւ թոյլ տալիս մէկ անգամ եւս նշել, որ Դասկիլէա սատրապութիւնը ուղղակիօրէն յիշատակուած չէ այս կամ այն հին պարսկական սեպագիր արձանագրութեան որեւէ աշխարհագրական հասկացութեան մէջ: Ամենայն հաւանականութեամբ, Դասկիլէայ սատրապութեան եւ ընդհանրապէս III սատրապութեան տարածքը հին պարսկական սեպագիր արձանագրութիւններում արտայայտուած է Կապադովկիա երկրի անուան տակ:

Ասիայի թրակացիներ: Քսերքսէսի՝ Հելլադա արշաւող բանակի կազմում ասիական թրակացիները հետեւեալ կերպ են նկարագրւում. «Թրակացիներն արշաւում էին՝ գլուխներին աղուէսի մորթուց գլխարկով. մարմնի վրայ նրանք հագել էին խիտոններ, իսկ դրա վրայից՝ խայտաբղետ թիկնոցներ. ոտներին ու ծնկներին նրանք կապել էին եղնիկի մորթուց պատրաստած մոյկեր: Բացի այդ, նրանք կրում էին տէգեր, թեթեւ վահաններ եւ փոքր դաշոյններ: Ասիա անցնելուց յետոյ նրանք կոչուել են բիթիւններ, մինչդեռ հնում, ինչպէս իրենք են պատմում, կոչուել են ստրիմոնեաններ, որպէս Ստրիմոն գետի մօտ

83 **Страбон**, с. 539.

84 Հմմտ. **Страбон**, էջ 545:

85 **E. Herzfeld**, *The Persian Empire*. Studies in Geography and Ethnography of the Ancient Near East, Wiesbaden, 1968, p. 312.

86 **Скилак Кариандский**, *Перипл обитаемого моря*, с. 261.

87 **Страбон**, с. 129, 529.

88 **R. Schmitt**, *Die achaimenidische Satrapie tayaiy drayahyā*,- "Historia", v. 21, 1972, pp. 522-527.

89 *Ց. Խորիկեան, Աքեմենեան Պարսկաստանի վարչական բաժանումների շուրջ*, Երեւան, 2010, էջ 35-39:

90 Նոյն տեղում, էջ 37:

91 **R. Kent**, *Old Persian*. Grammar. Texts. Lexicon. 2nd ed., New Haven, 1953, p. 136; *Les inscriptions de la Perse achéménide*. traduit du vieux perse, de l'élamite, du babylonien et de l'araméen, présenté et annoté par Pierre Lecoq, Gallimard, Paris, 1997, p. 228.

92 *Les inscriptions de la Perse achéménide*, p. 246.

բնակուողներ: Ինչպէս պատմում են, իրենք իրենց երկրից քշուել են տեւկրերի եւ միւսիացիների կողմից: Ասիական Թրակացիներին առաջնորդում էր Արտաբանոսի որդի Բասսակէսը»[93]: Ինչպէս տեսնում ենք, ասիական Թրակացիների միւս անուանումն էր բիթիւններ:

Հերոդոտոսը Թրակացիներին եւ բիթիւններին յիշատակում է Կրեսոսին ենթակայ ժողովուրդների շարքում[94], այսինքն՝ Թրակացիների մի մասը յիշատակւում է նաեւ բիթիւններ անուանումով: Իսկ միեւնոյն տեղեկութեան մէջ Թրակացիների եւ բիթիւնների միջեւ յիշատակուող Թիւնները, հաւանաբար, բիւթանիացիներին ցեղակից Թրակական ցեղեր էին, որոնց եւրոպական հատուածին բազմիցս յիշատակում է Քսենոփոնը[95]:

Թիւնները զբաղեցրել են Կալպէից արեւմուտք ընկած ծովափնեայ շրջանները մինչեւ Բոսփորի նեղուց, իսկ բիւթանիացիները՝ աւելի ներս ընկած շրջանները[96]: Ստրաբոնը բիթիւններին եւ Թիւններին նոյնպէս համարում է Թրակիական ցեղեր[97]:

Քսենոփոնը գրում է, որ յոյն վարձկաններն անցնում են նաեւ Թրակացիների կամ բիւթանիացիների երկրով, որոնց տարածքում էր գտնւում Կալպէ նաւահանգիստը[98]: Ըստ յոյն պատմիչի՝ «ասիական Թրակիան սկսւում է մուտքից եւ տարածւում մինչեւ Հերակլէա, ներս՝ դէպի Պոնտոս նաւողի աջ կողմում: Իսկ Կալպէ ծովախորշը գտնւում է Հերակլէայի եւ Բիւզանդիոնի միջեւ ընկած տարածութեան մէջտեղում»[99], այսինքն՝ Քսենոփոնը ասիական Թրակիայի արեւմտեան սահմանը սկսում է Բոսփորի նեղուցից, աւելի կոնկրետ՝ Ասիայի կամ Քաղկեդոնիայի Քրիւսոպոլիս քաղաքից[100]՝ հասցնելով մինչեւ Հերակլէա: Դատելով Քսենոփոնի տեղեկութիւններից՝ Բիւթանիան Փռիւգիայի հետ կազմել է առանձին սատրապութիւն[101]: Քաղկեդոնցիներին հարեւան էին բիւթանիական Թրակացիները կամ Բիւթանիան[102], ինչը կապուած էր աթենացիների, լակեդեմոնացիների եւ պարսիկների միջեւ տեղի ունեցող ռազմական գործողութիւնների հետ, եւ պատահական չէ, որ Քաղկեդոնի կարգավիճակի հետ կապուած հարցերը քննարկւում են Փառնաբազոսի հետ[103]:

Բիւթանիա-Բիթիւանիան տարբեր առիթներով յիշատակում է Դիոդորոս Սիկիլիացին[104]: Համաձայն Արիանոսի՝ Սանգարիոս գետը հոսում է բիւթանիական Թրակացիների երկրով եւ թափւում Եւքսինեան ծովը[105]: Ստրաբոնը Բիւթանիայի սահմանը հասցնում է մինչեւ Սանգարիոս գետը, իսկ Ասկանիաս լիճը տեղադրում է Բիւթանիայում[106]:

Պափլագոնացիներ: Պափլագոնացիները մասնակցել են Տրոյական պատերազմին[107]: Խօսելով հալիւսեան մատիենների մասին՝ Հեկատէոսը գրում է, որ «Հիոպէն մատիենների քաղաքն է, Գորդիոնի հարեւանութեամբ», եւ որ «Հիոպէ քաղաքում բնակիչները հագնւում էին պափլագոնացիների նման»[108]:

---

100 Նոյն տեղում, էջ 160-161. *Դիոդորոս Սիկիլիացի*, էջ 70: Այս նոյն սահմաններն է նշում նաեւ Սկիլաքս Կարիանդացին (տե՛ս **Скилак Карландский**, *Перипл обитаемого моря*, с. 261): Տե՛ս նաեւ **Pliny**, *Natural History*, V, 150, p. 332:

101 *Քսենոփոն*, *Անաբասիս*, էջ 150, 155, 197:

102 **Ксенофонт**, *Греческая история*, с. 254, 310.

103 **Плутарх**, *Алкивиад*, XXXI, с. 379-380.

104 *Դիոդորոս Սիկիլիացի*, էջ 17, 70:

105 *Արիանոս*, էջ 52:

106 **Страбон**, с. 510, 530.

107 *Իլիական*, II, 350:

108 **C. Méller**, *Fragmenta historicorum graecorum*, v. I, Parisiis, 1841, p. 13.

---

93 *Հերոդոտոս*, VII, 75:

94 Նոյն տեղում, I, 28:

95 *Քսենոփոն*, *Անաբասիս*, էջ 169-170, 177-179:

96 Հմմտ. **Pliny**, *Natural History*, V, 150, p. 334:

97 **Страбон**, с. 509.

98 *Քսենոփոն*, *Անաբասիս*, էջ 144:

99 Նոյն տեղում, էջ 147:

«Կիւրոպեդիայի» տեղեկութիւններից պարզւում է, որ Կիւրոս Մեծը Պափլագոնիայում սատրապ չի նշանակում, քանի որ երկիրը կամաւոր էր ենթարկուել պարսից իշխանութեանը[109]: Համաձայն Հերոդոտոսի՝ Կրեսոսին հպատակուել են նաեւ պափլագոնացիները, որոնք կապադովկեան սիրիացիներից հիւսիսում բաժանուել են Հալիւս գետով[110]: Պափլագոնացիները նոյնպէս մասնակցում են յունական արշաւանքին. «Պափլագոնացիներն արշաւում էին գլուխներին հիւսկէն սաղաւարտ դրած, փոքր վահաններով եւ ոչ մեծ նիզակներով, ինչպէս նաեւ տէգերով ու դաշոյններով: Ոտներին նրանք հագած էին տեղական կօշիկներ, որոնք հասնում էին մինչեւ սրունքի կէսը: Լիգիացիների, մատիենների, մարիանդինների եւ սիրիացիների հանդերձանքը նոյնական էր պափլագոնականի հետ: Պափլագոնացիներին եւ մատիեններին առաջնորդում էր Դոտոսը՝ Մեգասիդրոսի որդին, իսկ մարիանդիններին, լիգիացիներին եւ սիրիացիներին առաջնորդում էր Դարեհի եւ Արտիւստոնէի որդի Գոբրիւէսը»[111]:

Ք. ա. Ե. դարի վերջին Պափլագոնիան, որի առաջնորդն էր Կորիւլասը, տարածւում է Հալիւսից արեւելք՝ հասնելով մինչեւ Կոտիւորա քաղաքը[112]: Համաձայն Քսենոփոնի՝ Սինոպ քաղաքը գտնւում էր պափլագոնացիների երկրում[113]: Պափլագոնիայի թագաւոր Կոտիսը ընդդէմ Փառնաբազոսի դաշնակցում է Ագեսիլայոսի հետ՝ տալով նրան ռազմական ուժեր[114]: Պափլագոնիան արեւմուտքում՝ Հալիւս գետից այնկողմ, հասել է մինչեւ Պարթենիոս գետը[115] (ներկայիս Բարտինեւսուն կամ աւելի ճիշտ՝ Ենիջէն), որի ակունքները, ըստ Ստրաբոնի, գտնուել են Պափլագոնիայում[116], այսինքն՝ խօսքը վերաբերում է Պարթենիոսի աջակողմեան վտակներին:

Աւելի ուշ Պափլագոնիան նուաճում է Ալեքսանդր Մակեդոնացին՝ Անկիւրայից արշաւելով[117]: Ալեքսանդրի մահից յետոյ Պափլագոնիան Կապադովկիայի հետ անցնում է Եւմենոսին[118]: Արիանոսը հաղորդում է, որ Ալեքսանդրը չի արշաւում Պափլագոնիա, քանի որ վերջինս կամաւոր ընդունում է մակեդոնացիների իշխանութիւնը. Պափլագոնիան յանձնւում է Փռիւգիայի սատրապ Կալատոսի կառավարմանը[119]:

Մարիանդինները: Հեկատէոս Միլեթացին յիշատակում է մարիանդինների Ստեփանիս քաղաքը[120], որը նոյնանում է Սկիլաքս Կարիանդացու Ստեփանային[121], ներկայիս Իստիֆանին: Սրանք յիշատակւում են Կրեսոսին հպատակ ժողովուրդների շարքում[122]: Համաձայն «Անաբասիսում» պահպանուած տեղեկութիւնների՝ մեգարացիների գաղութ Հերակլէան՝ Կարադենիզ Էրեղլին, գտնուել է մարիանդինների երկրում, որից արեւմուտք ասիական Թրակացիների երկիրն էր[123]: Մարիանդինների երկրում Հերակլէա քաղաքը, Լիւկոս եւ Հիպիաս գետերը յիշատակում է Սկիլաքս Կարիանդա-

---

109 *Քսենոփոն*, *Կիւրոպեդիա*, էջ 355:

110 *Հերոդոտոս*, I, 6, 72:

111 Նոյն տեղում, VII, 72:

112 *Քսենոփոն*, *Անաբասիս*, էջ 121-122, 124, 137, 197. *Դիոդորոս Սիկիլիացի*, էջ 69:

113 *Քսենոփոն*, *Անաբասիս*, էջ 139. *Դիոդորոս Սիկիլիացի*, էջ 69:

114 **Плутарх**, *Агесилай*, XI, с. 247; **Xenophon**, *Scripta Minora. Agesilaus*, III, 4, p. 100.

115 *Քսենոփոն*, *Անաբասիս*, էջ 142:

116 **Страбон**, с. 510.

117 *Արիանոս*, էջ 200. *Ռուփոս*, էջ 281, 328, 411. **Плутарх**, *Александр*, *XVIII*,- "Избранные жизнеописания", т. II, Москва, 1987, с. 378.

118 *Ռուփոս*, էջ 596. *Դիոդորոս Սիկիլիացի*, էջ 15:

119 *Արիանոս*, էջ 57:

120 **C. Méller**, *Fragmenta historicorum graecorum*, v. I, Parisiis,1841, fr. 201, p. 14.

121 **Скилак Карландский**, *Перипл обитаемого моря*, с. 261.

122 *Հերոդոտոս*, I, 28:

123 *Քսենոփոն*, *Անաբասիս*, էջ 142, 147: Տե՛ս նաեւ **Pliny**, *Natural History*, VI, 4, p. 340.

ցին[124]: Լիւկոս գետը՝ ներկայիս Գիւլիւն-Դըշեւսուն, յիշատակում է նաեւ Քսենոփոնը[125], իսկ Հիպիասը՝ ներկայիս Բոյուկ-Մելան-չայ գետն է[126]: Ստրաբոնը մարիանդիններին, որոնց ոմանք անուանում են կաւկոններ, համարում է թրակիական ժողովուրդ կամ պափլագոնացիներ[127], սակայն, ըստ էութեան, մարիանդինները եղել են Փոքր Ասիայի հնագոյն բնակչութիւնը: Կաւկոններին Ստրաբոնը յիշատակում է մարիանդիններից արեւելք՝ մինչեւ Պարթենիոս գետը[128]:

Այսպիսով, կատարուած քննութիւնը ցոյց է տալիս, որ III սատրապութիւնն ունեցել է ընդարձակ տարածք, որի սահմաններն Աքեմենեան տիրապետութեան ընթացքում փոփոխուել են, եւ նոյն սատրապութեան նախկին ենթաշրջանները որոշ դէպքերում վերակազմաւորուել են առանձին սատրապութիւնների:

124 **Скилак Кариандский**, *Перипл обитаемого моря*, с. 261.

125 *Քսենոփոն, Անաբասիս*, էջ 142:

126 **Скилак Кариандский**, *Перипл обитаемого моря*, с. 267.

127 **Страбон**, с. 270, 327, 508.

128 Նոյն տեղում, էջ 509:

A PROPOSAL FOR PAN-CAUCASIAN ALPHABET[1]

Vazgen R. Ghazaryan

1. Introduction

The Caucasus or *Jabal Al-Alsun* ("Mountain of Tongues"), as it was named in the annals of medieval Arab geographers, is one of the most prominent places on Earth by the diversity and density of concentration of languages. The region is home to more than 50 nations and ethnic communities[2], which languages belong to five distinct families. Three of those, namely, the *Northwest Caucasian* (West-Caucasian or Abkhaz-Adyghean), *Northeast Caucasian* (East Caucasian or Nakh-Dagestanian) and *South Caucasian* (Kartvelian) language families are confined within the limits of the Greater and Lesser Caucasus Mountain Ranges[3] and currently comprise 41 languages considered native to the region for at least four thousand years[4].

Located amidst the sphere of distribution, contiguity and mutual influence of the Indo-European, Altaic and Semitic language families, the Caucasus, presumably due to the peculiarities of the landform and relative isolation of mountainous regions, was able to preserve a certain degree of representativeness and sufficient diversity of the three autochthonous language families, preventing their extinction or reduction to a language isolate.

Nevertheless, the historical and political realities, established in the region during the last 200 years[5], gravely threaten the means of development of these languages and challenge their future existence. For instance, starting from the mid-19th century the majority of native speakers of the NWC (Northwest Caucasian) languages settled beyond the limits of the Caucasus, being almost completely deported in consequence of imperial expansion. As a result, this once multilingual family that was widely and homogeneously spread all over the Western Caucasus, has presently diminished to a few isolated enclaves with a shrinking population. The situation is somewhat different in the Eastern Caucasus, but there also a number of NEC (Northeast Caucasian) languages nowadays count a few thousand of even a few hundred speakers, and being en-

1 The ideas briefly presented in the current synopsis are expounded in the monograph *A Proposal for Pan-Caucasian Alphabet* by Vazgen Ghazaryan (Yerevan, 2012, ISBN 978-9939-0-0603-1; in Armenian and Russian languages).

2 Comrie, Bernard, *Linguistic Diversity in the Caucasus*. Annual Review of Anthropology, Vol. 37, October 2008; Коряков Ю.Б. *Атлас кавказских языков* / РАН. Ин-т языкознания. — Москва: Пилигрим, 2006.

3 Волкова Н.Г., *Этнонимы и племенные названия Северного Кавказа*. М., 1974; Анчабадзе Ю.Д., Волкова Н.Г. *Этническая история Северного Кавказа XVI-XIX вв.* // Материалы к серии "Народы и культуры". Выпуск XXVIII. «Народы Кавказа». М., 1993. Книга I.

4 Nikolaev S.L., Starostin S.A., *A North Caucasian etymological dictionary*. Moscow, 1994; G.B. Hewitt. *Introduction to the Study of the Languages of the Caucasus*, Lincom Europa, 2004; J. C. Catford. *Mountain of Tongues: The Languages of the Caucasus*, Ann. Rev. of Anthropol., 6 (1977); *Языки мира: Кавказские языки*. (ред. М.Е. Алексеев, Г.А. Климов, С.А. Старостин, Я.Г. Тестелец), М., Academia, 1999.

5 *История народов Северного Кавказа (конец XVIII в. - 1917 г.)*, Москва, «Наука», 1988.